

ԷՐՏՈՂԱՆ ՁԵՋԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Posted on May 31, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Արմենիա, Պուլենոս Այրես, 31 Մայիս 2010

✘ Արժանթինի Հայ Համայնքը Արգելք Հանդիսացաւ Որ Աթաթուրքի Կիսանդրին Չետեղուհի Պուլենոս Այրեսի Մէջ

Թուրքիոյ վարչապետ Ռեչեպ Թայյէպ Էրտողան վերջին պահուն ջնջեց Մայիս 31ին Արժանթին կատարելիք իր միօրեայ պաշտօնական այցելութիւնը անընդունելի համարելով Պուլենոս Այրեսի կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ Աթաթուրքի կիսանդրին զետեղման դէմ քաղաքի իշխանութիւններուն դրած արգելքը որպէս հետեւանք երկրի հայ համայնքի բողոքին:

Արմենիա, Պուլենոս Այրես, 31 Մայիս 2010

✘ Արժանթինի Հայ Համայնքը Արգելք Հանդիսացաւ Որ Աթաթուրքի Կիսանդրին Չետեղուհի Պուլենոս Այրեսի Մէջ

Թուրքիոյ վարչապետ Ռեչեպ Թայյէպ Էրտողան վերջին պահուն ջնջեց Մայիս 31ին Արժանթին կատարելիք իր միօրեայ պաշտօնական այցելութիւնը անընդունելի համարելով Պուլենոս Այրեսի կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ Աթաթուրքի կիսանդրին զետեղման դէմ քաղաքի իշխանութիւններուն դրած արգելքը որպէս հետեւանք երկրի հայ համայնքի բողոքին:

Էրտողան թուրք նախարարներու եւ ձեռնարկատէրերու բազմանդամ պատուիրակութեան մը հետ անցեալ շաբաթ պաշտօնական այցելութեամբ կը գտնուէր Ռիօ Տէ ժանէյրօ՝ մասնակցելու համար այսպէս կոչուած «Քաղաքակրթութիւններու Դաշինք»ի միջազգային երրորդ հանդիպման: Պրագիլէն յետոյ, թրքական պատուիրակութեան շրջապտոյտի ծրագրին վրան էին Արժանթինն ու Չիլէն: Երկու այցելութիւններն ալ վերջին պահուն ջնջուեցան, առաջինը Աթաթուրքի կիսանդրիի զետեղման արգելքին իսկ երկրորդը՝ Իսրայէլի կողմէ դէպի Կազա ուղղուող թրքական նաւերու վրայ կատարուած յարձակման պատճառով:

Հարաւային Ամերիկայի երեք կարեւորագոյն երկիրներու Էրտողանի այցելութիւնը կը պատրաստուէր երկար ժամանակէ ի վեր: Արժանթին կատարուելիք այցելութեան ծրագրին մէջ նախատեսուած էր հաղիպում Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ, պաշտօնական ճաշ՝ Նախագահական Պալատին մէջ Նախագահուհի Քրիսթինա Ֆեռնանտես Քիրշների հետ, Ալվէար Փալաս պանդոկին մէջ ընդունելութիւն ձեռնարկատէրերու մասնակցութեամբ եւ մայրաքաղաք Պուլենոս Այրէի կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ Աթաթուրքի կիսանդրիի զետեղում, որուն բացման արարողութիւնը պիտի կատարուէր Էրտողանի մասնակցութեամբ:

Ժխտումի քաղաքականութեան տարածման նախապատրաստութիւնը

Թրքական պատուիրակութեան այցելութիւնը խոր մտահոգութիւն պատճառեց Արժանքի հայ համայնքին: Անոր նպատակը երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու զարգացումը չէր միայն, այլ՝ Յեղասպանութեան ժխտումի քաղաքականութեան հաստատագրումը Արժանքի մէջ: Նշենք, որ Ուրուկուայէն (1965) եւ Ֆրանսայէն (2000) յետոյ, Արժանքին Յունուար 2007ին օրէնքով (թիւ 26.199) ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը: Ի տարբերութիւն իր նախորդներէն Գառլուս Սաուլ Մենեմի, որ 1995ին նոյնանման օրէնք մը թրքական ճնշումներու տակ վերջի ենթարկած էր, Արժանքի օրուայ նախագահ Նեսթոր Զիրշներ (ներկայ Նախագահուհիի ամուսինը) մերժած էր այդ քայլին դիմել՝ հաւատարիմ մնալով մարդկային իրաւանց պաշտպանի իր սկզբունքներուն:

Թիւ 26.1999 օրէնքը պատճառ դարձած էր, որ թրքական դիւանագիտութիւնը աշխուժանայ Արժանքի եւ Ուրուկուայի մէջ, ի մասնաւորի այսպէս կոչուած «ֆութպոլային դիւանագիտութեան» եւ հայ-թրքական փրոթոքոլներու գործընթացի ժամանակ: Պուէնոս Այրէս գործուղուած դեսպանը՝ Հայրի Հայէթ Եալավ, օգտագործելով փրոթոքոլներու թրքական մեկնաբանութիւնը, ի մասնաւորի ինչ կը վերաբերի Հայոց Յեղասպանութիւնը յանձնաժողովներու մէջ քննարկելու հարցին, բազմացուց իր ճիգերը ե՛ւ դիւանագիտական, ե՛ւ քաղաքական, ե՛ւ լրատուական, ե՛ւ հասարակական շրջանակներու մէջ՝ թրքանպաստ մթնոլորտ գտեղծելու համար: Անկախ դիւանագիտական իր հանդիպումներէն, թրքական դեսպանատան միջոցառումները, յատկապէս Ապրիլեան յիշատակումներու նախօրեակին, ընդգրկեցին ի մէջ այլոց նամակարշաւ Խորհրդարանի անդամներուն, քաղաքական դէմքերու եւ հանրածանօթ հրապարակագիրներու հրաւերներ Թուրքիա այցելելու, հրապարակային դասախօսութիւններ, Թուրքիոյ բարեկամներու խմբակցութեան առաջացում եւ թուրք-արժանքիներէն մշակութային կապերու հասարակական կազմակերպութեան ստեղծում:

Թրքական այս քարոզարշաւին դիմաց, դժբաղդաբար, Հայաստանի դիւանագիտութիւնը, շատ հաւանաբար աւելի շահագրգռուած փրոթոքոլներու գործընթացի յաջողութեամբ, անհրաժեշտ հակազդեցութիւնը չունեցաւ: Հայոց Յեղասպանութեան պատմական ճշմարտութեան յանձնառութիւնը չթարգմանուեցաւ թրքական ժխտողականութեան զսպումի եւ դատապարտումի ակտիւ քաղաքականութեամբ:

Առանց աղմուկի

Պուէնոս Այրէսի կեդրոնական հրապարակներէն մեկուն վրայ Աթաթուրքի կիսանդրիի զետեղումը թրքական դեսպանատան միջոցառումներէն ամենէն անաղմուկն էր, եւ թերեւս ամենէն հիմնականը: Պատահական չէր, որ այն կու գար Հայոց Յեղասպանութեան 95ամեակին եւ ծրագրուած էր Արժանքինը նկատի ունենալով:

Պրագիլի մէջ նման միջոցառում տեղի չունեցաւ: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հարաւային Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը այդ մասին իմացաւ Երտողանի այցելութենէն միայն մէկ շաբաթ առաջ:

Հ. Դ. Յանձնախումբի նախաձեռնած հետաքննութիւնը երեւան հանեց, որ հրապարակային տեղ մը կիսանդրիի գետեղման ամբողջ գործընթացը, որուն համար անհրաժեշտ են Պուլենոս Այրես Ինքնավար Քաղաքի օրէնսդրութեամբ նախատեսուած սահմանադրական քայլերու ամբողջ շարան մը, եղած էր ապօրինի: Թուրք դեսպանը, ինչպէս ինք արժանաբանեան մամուլին տեղեկացուց, դիմած էր քաղաքի իշխանութիւններուն, որոնք դեռեւս անյայտ պատճառներով համաձայնած էին նոյն այդ հրապարակին վրայ նախապէս գտնուող եգիպտագի հայրենասէր Ահմատ Արապիի կիսանդրին վերցնել եւ անոր տեղը դնել Աթաթուրքի կիսանդրին: Թուրք դեսպանը, առաւել, սուտ խօսեցաւ մամուլին յայտարարելով որ կիսանդրիին «վերաբացումն» էր որ ծրագրուած էր, երբ Աթաթուրքի կիսանդրի երբեք չէր գետեղուած Պուլենոս Այրեսի մէջ:

Յիշենք, որ կիսանդրիի բացման արարողութեան համար թրքական դեսպանատունը հրաւերներ ուղարկած էր Արժանքին կայք հաստատած պոլսահայերու: Անոնցմէ որոնք տակաւին թրքական անցագրով կը ճամբորդեն, ինչպէս տեղեկացուեցաւ, դեսպանատան պաշտօնեաներ զանգեցին «յորդորելով» որ ներկայ գտնուէին արարողութեան այլապէս իրենց թուղթերու վերանորոգման համար կրնային դժուարութիւններու դէմ յանդիման գալ...

Համայնքային զօրաշարժ

Կիսանդրիի գետեղման լուրն ու անոր մանրամասնութիւնները իմանալէն յետոյ, Հ. Դ. Յանձնախումբը դիմեց համայնքի բոլոր կազմակերպութիւններուն, որոնք Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ Կեդրոնական Վարչութեան հրաւերով հաւաքուեցան Առաջնորդարանին մէջ Հինգշաբթի 27 Մայիսի գիշերը:



Յաջորդ օրն իսկ արժանաբանեան մամուլին մէջ լոյս տեսան ընթերցողներու նամակներ եւ համայնքին կողմէ հրապարակուած հաղորդագրութիւն մը, որ բողոք կը յայտներ Երտողանի այցելութեան դէմ եւ կը պահանջէր ջնջել Աթաթուրքի կիսանդրիին գետեղումը: «Մուսթաֆա Քեմալ շարունակեց թուրք-օսմանեան կայսրութեան կողմէ 24 Ապրիլ 1915ին սկսած բնաջնջման ծրագիրը որուն զոհ գացին 1,5 միլիոն անմեղներ եւ պատասխանատուն է Թուրքիոյ ներկայ կառավարութեան հետապնդած Հայոց Յեղասպանութեան ժխտումի քաղաքականութեան», գրուած է հաղորդագրութեան մէջ: Յեղասպանի կիսանդրիին գետեղումը «ոչ միայն բարոյապէս անընդունելի է այլ նաեւ կը խախտէ Պուլենոս Այրես Ինքնավար Քաղաքի օրէնքները»:

Հայ Դատի Յանձնախումբը բողոքի նամակներով դիմեց խորհրդարանականներու եւ

կառավարական պատասխանատուներու յայտնելով որ Աթաթուրքի կիսանդրիի գետեղումը վիրաւորանք է հայ ծագումով քաղաքացիներու եւ անյարիր է մարդկային իրաւանց պաշտպանի արժանաթիւնեան պետական յանձնառութեան: Անհատ քաղաքացիներ, զուգահեռաբար, դիմեցին դատական իշխանութիւններու՝ միջոցառման կասեցման համար իրաւական գործընթաց սկսելու նպատակով:

Համայնքէն պատուիրակութիւն մը, գլխաւորութեանը Արժանաթիւնահայոց Առաջնորդ Տ. Գիսակ Արք. Մուրատեանի եւ բաղկացած Հ. Յ. Դ. Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն, Հայ Դատի Յանձնախումբէն, Հ. Ա. Ե. Կեդրոնական Վարչութենէն եւ Հայկական Մշակութային Միութենէն ներկայացուցիչներէ, Ուրբաթ 28 Մայիսին այցելեց Քաղաքային իշխանութեան մէջ Միջավայրի եւ Հանրային Տարածութիւններու Նախարար Տիէօ Սանթիլիի, որուն դիմեց կիսանդրիի գետեղման ջնջման պահանջով: Նախարարը, ընդառաջելով դիմումին, նոյն օրը, Մայիս 28ին, հրամանագիր ստորագրեց կասեցնելով ամբողջ գործընթացը:

Քաղաքային իշխանութիւնները իրենց կեցուածքը մամուլին բացատրեցին ըսելով որ ե՛լ գործընթացը օրինական հունէ չէր անցած, ե՛լ ընդունելի չէր Հայոց Յեղասպանութեան պատասխանատուներէն մէկուն կիսանդրիին գետեղումը: Եւ հակառակ այն իրողութեան, որ Արտաքին Գործոց Նախարարութիւնը փորձեց այցելութեան ջնջման պատասխանատու համար քաղաքային իշխանութիւնները, արժանաթիւնեան մամուլին համար յստակ էր, որ այն եղած էր արդիւնք համայնքի ազդեցիկ բողոքին:

Մայիսեան տօնախմբութիւն

Աթաթուրքի կիսանդրիի գետեղման ջնջումը, որ զուգահիւսեցաւ Հայաստանի Հանրապետութեան 92ամեակին ճիշդ նոյն օրը, ողջունուեցաւ համայնքի բոլոր կազմակերպութիւններու կողմէ: Անկախ իրենց գաղափարախօսական հակումներէն, բոլոր կազմակերպութիւնները խմբագրականներով, հրապարակային ելոյթներով թէ Կիրակի 30 Մայիսին եկեղեցական արարողութիւններու ժամանակ արտասանուած քարոզներով եւ խօսքերով կարեւորութեամբ շեշտեցին համայնքային միասնականութիւնն ու անմիջական զօրաշարժը:

Շաբաթ Մայիս 29ի գիշերը, Արմենիա Մշակութային Ընկերակցութեան մէջ Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպած Մայիսեան տօնախմբութեան խօսք առնելով Կեդրոնական Կոմիտէի Ներկայացուցիչը շնորհաւորեց համայնքի բոլոր կազմակերպութիւնները իրենց միասնականութեան եւ ճիգերու միաւորման համար: «Հաւաքական յիշողութեան եւ ճշմարտութեան իրաւունքի յանձնառու երկրի մը մէջ անընդունելի է Յեղասպանութեան ժխտումը որ Էրտողան կ'ուզէր իր հետ բերել եւ Աթաթուրքի կիսանդրիի գետեղումով հաստատագրել», ըսաւ ան, միաժամանակ պահանջելով որ Հայաստանի պետական քաղաքականութիւնը անելի ակտիւօրէն յանձնառու ըլլայ թրքական ժխտողական ակրեսիւ քաղաքականութեան

հակազդեցութեան:

Երկուշաբթի 31 Մայիսին մամուլին ուղարկած հաղորդագրութեամբ մը, Հայ Դատի Յանձնախումբը այցելութեան ձախողութեան պատասխանատուութիւնը դրաւ Էրտոդանի ուսերուն: «Էրտոդան կ'ուզէ իր երկրին մէջ իրագործած ժխտումի քաղաքականութիւնը հոս արտածել եւ մեզի պարտադրել: Թոյլ պիտի չտանք»:

